սոփերայ և քան զոպազիոն հնդկային. ուստի յաւէժ շնորհապարտ լինիլ դատիմ զքաղցրահամբոյր եղբայրսիրութենէ քումմէ անհատականէ, և խնդրեմ յԱնհատահոս աղբերէ սիրոյն առ ի յաւէտ պրկեալ պնդեալ անլոյծ և անխզելի պահել զշաղկապն իրերացս սիրոյ: Եւ զգիարդն բարեյաջող կացութեան Գերյարգելի Պայծառութեան ձերոյ, և ընդ հովանեաւ ձերով պարածածկեալ մաքրակրօն եղբարց միաբանից՝ լսեմք միշտ ի քոյայնոց առժամայս աստանօր նշդեհացեալ երջանկափառից, որոյ վասն զուարճացեալ բերկրիմք հոգւով չափ ևս քան զևս. բայց medispiace[1]. *զի Հայր Մկրտիչ Պետ՝ սիրազունն իմ յատկե[ա]լ չէ ի միջի ոչ այդր առ ի բախացուցանել զՀամեղբայրութիւնն ձեր, և ոչ այսր առ ի արգահատել զառանձնականութիւնն իմ ճոխաբանութեամբ իւրով. բայց վշտագնիմ յոյժ, զի որպէս ոգինն յոգունք, թէ նա ինքն իցէ առիթ՝ ցարդ ևս յամեցման և կատարունակման երկրորդ հատորի բառարանին, և հաւատամ այնպէսն լինիլ, զի ի մանկական տիոց հետէ մինչև ցայժմ խիստ շատ հաշարի է, որ ի փորձոց գիտեմ և կամի թէ յամենայն ուրեք զիւր հաշարի լինելոյն նշմարանքն ներտպաւորէ: Իսկ եթէ արդէն լեալ իցէ դարձ նորա բարեաւ ի Սուրբ մենաստանդ, ա՛զդ արասջիր նմա, թէ կաթոգինն քո Սարգիս վրդ. կարօտանօք Ողջունէ զքեզ, և բաղձահարի իսկ միւսանգամ տեսանել զքեզ, ուր և կամիցի նոյն ինքն Ամենայն յուրեքն, եթէ հաճելի իցէ ինքեան: Եւ զգիարդն պատրիարքականի փոփոխման տեղւոյս, և զիմ խղճալւոյ ճողոպրիլն յայնմանէ շնորհիւ Տեառն, թէև հրաւիրումն յորդորումն և հրապուրումն իցէր չափազանցօրէն, ևս զմահուանէ Պայտեան յակոբկանն, և զյաջորդելոյ նմա Գրիգոր վրդպ.ի ուրումն՝ ըստ իմս վարկման ցարդ ևս գրեալք են Պայծառութեան քո լիալիր, ուստի ոչ է ճահ երկրորդաբանելն վերստին. բայց սոյնս լինիցի մեծութեան քում արդեան* novita[à][2]. *զի Աբրահամ պետ առաջնորդ զմիւռնոյ՝ աշխարհածուփ, որ և էր Սեաականագոյնն ի հակառակորդս, մեծաւ հրաշափառութեամբ՝ Հաթտի հիւմայինով. և գրեա թէ՝ հաւանութեամբ իսկ երկաքանչիւր կողմանց բոլոր ազգի մերոյ՝ աքսորեցեալ եղև ի բուն իսկ զաւառ իւր յԱստապատ, որոյ նաև տուտն քարշեաց և քարշէ տակաւին ընդ իւր հետևաբար զինքնանման զեղծագործս ոմանս, այլ ի Տեառնէ եղև այս, և է սքանչելի յաչս մեր. քանզի Արբազան Բահանայապետն Կղեմէնդիոս ա՛րագ արագ, և լո՛ւ ի լու պատժեաց զնոսա սքանչելապէս: Եւ էֆիմէրտ գրեանքն իմ հասին առ իս, թուով* 195. *և զծախսն վճարեցի Հայր Զաքարիա սիրելւոյն մեր ղուուշ* 45, *փրյ.* 15: *Եւ յոյժ յոյժ շնորհակալ եմ զՋէնջ՝ վասն ոչ անխայելոյ վասն իմ զաշխատանս ձեր. բայց զկէսն շնորհակալութեան իմոյ պահեալ ունիմ առ իս առ ի վերահաստուցանել Տեառնդ՝ մինչ ի Թէսկէրէջ նշանագրեցեալ գրեանքն հասցին առ իս: Հանուրց մաքրափայլ կրօնաւոր եղբարց կրօնաստանիդ Սրբոյ՝ ի մեծամեծաց մինչև ցփոքունս, ուրոյն ուրոյն Ողջոյն և Օրհնութիւն ընծայեմ ըստ պատուոյ և ըստ արժանաւորութեան ի Քրիստոս Յիսուս, և Արբազան աղօթից նոցին ծարաւեցե[ա]լ կարօտիմ իսպառ, և մնամ յաւէտ կաթոգնեալ և սրտակաթ ի սէր տեսութեան ձերոյ. Որ և եմ իսկ*

Նուաստագոյն Ծառայ Տեառն
Սարգիս վրդ. և այլն:

Ի Սուրբ Լուսաւորչի Եկեղեցին
որ ի Կոստանդինուպօլիս, 1764 *հոկտ.* 8

Տեառն Հայր Մաթէոս, և Տեառն Հայր Վրդանէս Արհիապանծ Վարդապետաց՝ սերտ Սիրով Ողջոյն և յարգումն ընծայեմ ի Քրիստոս Յիսուս:

1. Կը ցաւիմ։
2. Նորութիւն։